ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ № 3. ՄԱՅԻՍ, 1894.

ՀԱՄԱՅՆՔ

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՀԻՄՔԸ

ՀԱՅ ԳԻՒՂԱՅԻՆ Է

—

Ամենուն յայտնի է, որ յեղափոխական շարժումների բուն պատճառը տնտեսական հարստահարութիւնն է՝ որը ազդում է ժողովրդի զարգացման եւ իւր թշուառ դրութիւնը ըմբռնել կարող լինելու աստիճանին համեմատ։ Տնտեսական հարստահարութիւնը՝ որ կայանում է այս կամ այն միջոցով արդիւնաբերող դասակարգի ձեռքից իւր աշխատութեան արդիւնքը խլելում, կատարվում է զանազան ձեւերով, յարմարուելով տեղական արդիւնաբերութեան տարբեր եղանակներին եւ տալիս է յեղափոխական շարժման այս կամ այն ուղղութիւնը։ Որովհետեւ արդիւնաբերութիւնը բաժանվում է երկու գլխաւոր տեսակի՝ արհեստական եւ երկրագործական, եւ որովհետեւ արդիւնաբերութեան այդ երկու եղանակները կեղեքելու համար հնարուած են տարբեր ձեւեր, յեղափոխական շարժումն էլ ստանում է երկու որոշ ուղղութիւն, իրեն յատուկ ծրագրով եւ գործածելիք միջոցներով։

Ուր որ ժողովուրդը բացառապէս պարապում է արհեստներով եւ իւր կեանքը մաշեցնում գործարաններում, այնտեղ թշուառ գործաւորներն են որ ներկայացնում են յեղափոխական տարրը։ Այդ տեսակ շրջանում յեղափոխական շարժումը ստանում է իրան յատուկ մի ընթացք, պահանջում է իրան յատուկ ուղղութեամբ պրօպագանդ, օգտվում է իրան յատուկ դրդռութիւններից եւ իրան յատուկ միջոցներով սարսափեցնում է իւր հարստահարիչ թշնամիներին։

Իսկ ուր որ ժողովրդի ահագին մեծամասնութիւնը կիզիչ արեւի տակ կեռացած ապերախտ գութանին վերայ պարապում է երկրագործութեամբ եւ ձմեռը մի գդալ տաք կերակուրի, մինչեւ իսկ մի կտոր չոր հացի կարօտ է մնում, այնտեղ գիւղացու աշխատութիւնից կոչտացած ձեռքն է, որ բարձրացնում է յեղափոխական դրօշակը եւ առաջ մղում իւր փրկութեան կռիւը իրան յատուկ ուղղութեամբ եւ միջոցներով։

Մեքենաների պէս աշխատող գործաւորների եւ անասունների պէս տքնող մշակների, մարդկութեան այդ երկու արդիւնաբերող մեծ դասակարգերի յեղափոխական շարժման նպատակը միեւնոյն է, — երկուքն էլ ձգտում են ազատուիլ հարստահարիչների ճիրաններից, խլելով նրանցից հողը եւ աշխատութեան միջոցները, որպէս զի կարողանան ազատութեամբ վայելել իրանց աշխատութեան արդիւնքը։

Այո՛. ամբողջ հարստահարուած մարդկութեան նպատակը իւր տնտեսական բացարձակ ազատութիւնն եւ անկախութիւնն է. բայց այդ ամենուն հաւասարապէս ցանկալի նպատակին հասնելու համար իւրաքանչիւր դասակարգ օգտվում է իրան շրջապատող հանգամանքներին աւելի յարմար եղող յեղափոխական միջոցներից։ Եթէ ուշադրութեամբ քննենք Եւրոպայի յեղափոխական շարժումը, անմիջապէս կը նշմարենք երկու յեղափոխական առեղ բանակներ իրանց յատուկ զէնքերով, ծրագրով եւ կազմակերպութեամբ։

Իրլանդիայի եւ Սիցիլիայի ժողովուրդները, որ մեծ մասամբ հողագործներ են, իրանցից խլուած հողը յետ ստանալու եւ համայնականացնելու համար իրենց վրէժխնդրութիւնը թափում են հողագործութեամբ չը պարապող հարուստ հողատէրերի եւ նրանց պաշտպանող կառավարութեան պաշտօնեաների եւ հարկահաւաքների դէմ։

Մինչդեռ գործարաններում հալումաշ եղող գործաւորները յայտնի ընկերութիւններ են կազմում, բազմաթիւ միթինքներում իւրեանց դժգոհութիւնը յայտնում, գործադուլներով իւրեանց անտանելի դրութեան դարման փնտռում եւ երբեմն վաճառականներ աւարի տալով ստամոքսին պատառ պատառ անող քաղցածութեան սասսկութիւնը հռչակում։

Այս երկու յեղափոխական բանակները օրից օր աւելի մօտենում են իրար եւ հեռու չէ այն կարմիր օրը, որ ցեխի մէջ թաթախուած մշակը միացած ածուխի մուրից սեւացած գործաւորի հետ վերջ կը դնեն իրանց թշուառութեան պատճառ եղող կարգերին եւ օրէնքներին։

Այս մի քանի տողերով ցոյց տալուց յետոյ

երկու յեղափոխական բանակների գոյութիւնը իւրեանց յատուկ պատճառներով, ծրագրով եւ գործունէութեան միջոցներով, երբ խօսքներս ուղղում ենք մասնաւորել հայերի յեղափոխական շարժման մասին եւ նրան տեղ տալ այդ երկու բանակներից միւսում, առաջին հայեացքով իսկ համոզվում ենք, որ այդ շարժման հիմքը հայ գիւղացու վերին աստիճանի հասած թշուառ դրութիւնն է։ Հայրենիքում բնակվող հայերի ահագին մեծամասնութիւնը երկրագործներ են, որոնց դրութիւնը այլեւս անտանելի է դարձել։ Հայ արհեստաւորների դրութիւնն էլ նախանձելի չէ, բայց այդ ճիւղում մեծ կապիտալիստական արդիւնաբերութիւնը դեռ հիմնաւորապէս մտած չը լինելով հայ արհեստաւորը իւր թշուառ կեանքը մի քանի ժամանակ էլ կարող է քաշ տալ, մինչդեռ հայ երկրագործը մահամերձ վիճակի մէջ է, իւր վերջին շունչը փչելու վրայ է։ Այս երեւոյթի պատճառը Թիւրքիայի հարկահանութեան դրութիւնն է։ Թիւրքիան այն երկրներից է, ուր բացի անուղղակի հարկերը, ուղղակի հարկերի ամենամեծ մասը եւս բարդուած է աշխատող դասակարգի, մասնաւորապէս հողագործների վրայ։

Մի քանի փաստերով հաստատենք ասածներս։

Թիւրքիայի բիւդժէի մեծագոյն մասը կազմում է երկրագործների արդիւնաբերութեան եւ նրանց ընտանի կենդանիների վրայ դրուած տուրքը։ Հարկը, որ ինքնին արդէն մի բռնաբարութիւն է, տասանորդական հարկի ձեւով դառնում է մի դժոխային պատիժ ժողովրդի գլխին։ Տասանորդական տուրքի միայն անունն է մնացել տասանորդական, իսկ ինքը այժմ հինգերորդական է դարձել, — փոխանակ արդիւնքի մի տասանորդը վերցնելու, երկու տասանորդ են վերցնում։ Եւ գիտէք ի՞նչ անունով են պահանջում այդ աւելորդ տասանորդը. հասարակաց կրթութեան եւ երկրագործական բանկերի հաստատութեան համար, մինչդեռ ժողովրդի նախաձեռնութեամբ բացուած մի քանի դպրոցներն էլ փակուած են կառավարութեան ձեռքով, եւ երկրագործական բանկերի տեղ, Համիդիյէ հեծելազօրքի ձիերը փչացնում են երկրագործների նոր կանաչած արտերը։

Զինուորական հարկը նոյնպէս խեղդում է երկրագործ ժողովրդին։ Իւրաքանչիւր արու, օրօրոցի մանուկից սկսած մինչեւ գերեզմանի դուռը հասած ծերունին 40 ղրուշից աւելի է վճարում ապահովացնելու համար այն բանակի գոյութիւնը, որ իրանց գնտակահար կոտորում է։

Գոյութիւն չ՚ունեցող ճանապարհների համար իւրաքանչիւր անհատի վճարած 20 ղրուշը չը պէտք է մոռանալ։

Առանց մանրամասնութեանց մէջ մտնելու հաստատապէս կարող ենք ասել, որ 10 հոգուց մի գիւղական հայ ընտանիք մօտաւորապէս 1000 ղրուշ տարեկան տուրք է տալիս։

Այս 1000 ղրուշը մի ահագին գումար է մի այնպիսի երկրի համար, ուր հաղորդակցութեան ճանապարհների պակասութեան պատճառով գիւղացու արդիւնաբերութիւնը ամենաչնչին արժէք ունի։ Այդ 10 հոգուց բաղկացած ընտանիքի իւր գոյութեան համար ամբողջ տարուայ միջոցին ապառած ամեն տեսակ մթերքը՝ ուտելիք, հագնելիք, եւ այլն, 1000 ղրուշի արժէք չունեն։ Մի ընտանիք իւր ամբողջ ծախքին հաւասար տուրք վճարէ՞...

Այս չ՚լսուած հարստահարական դրութիւնը երկար չի կարող տեւել։ Այսպիսի հանգամանքներում մի ժողովուրդ կամ բոլորովին պիտի սպառի եւ կամ ազատուի։

Թիւրքիայի քաղաքական եւ տնտեսական ռէժիմը մահուան է դատապարտած իւր ամբողջ ազգաբնակութիւնը։ Պարբերաբար կրկնվող սովերը, մինչեւ իսկ ամեն տեսակ համաճարակ հիւանդութիւնները այդ քայքայված եւ հիւանդ կազմակերպութեան ուղղակի հետեւանքն է։

Այն անգութ սովը, որ այսօր տիրում է թշուառ Հայաստանում, Թիւրքիայի ներքին կազմակերպութեան, եւ մասնաւորապէս նրա հարկային դրութեան արդիւնքն է։

Նոյնպէս այս դժոխային տուրքերի արդիւնքն է, որ Հայաստանի գիւղային օրից օր կորանցնում է իւր նախահայրերի արիւնով ցողուած եւ իւր դառն քրտինքով շաղաղուած հողը յօգուտ վաշխառուների։ Նա իւր հողը գրաւ է դնում եւ ծախում իւր հարկերը վճարելու համար։ Զարմանալի չենք լինիլ, եթէ ասենք, որ հայ հողագործների կէսը իւրեանց հողը կորուսնցած, յափշտակիչի քմահաճոյքին գերի դարձած, իբր ստրուկ ծառայում են եւ վերջը սոված մնալով վայրի խոտեր, մինչեւ իսկ փուշերի միջուկը ուտելու ստիպվում։ Միւս կէսն էլ գրեթէ առանց բացառութեան անարեւակայելի տոկոսներով բարդուած, պարտքերի տակ ճնշուած նոյն անտանելի դիրքի մէջ է գտնվում. թէպէտ եւ իւր հողին տէրն է, բայց այդ հողատիրութիւնը մի ձեւական խաբէութիւն է վաշխառուների դժոխային գանձից դուրս եկած։ Բացատրենք ասածնիս. — վաշխառուն մտածում է, որ եթէ հողին տիրէ, իւր եկամուտը անհամեմատ քիչ կը լինի այն տոկոսից, որ վճարում է գիւղացին, ձգելով իւր ընտանիքը եւ օտար երկիր երթալով։ Թշուառ մշակը իւր ամբողջ գլուխը քարէքար տալով արեան քրտինքով է չահում եւ լեցնում վաշխառուի բուռը։ Խեղճ գիւղացին ոսկի յոյսերով օրօրվելով անընդհատ վճարում է, բայց իւր անիծուած պարտքը օրից

որ աւելանում է փոխանակ պակասելու։ Երբ գիւղացին անընդունակ է դառնում այլեւս աշխատելու եւ տոկոսները վճարելու, ահա՛ այն ժամանակ միայն վաշխառուն խլում է նրա հողը։ Հարիւրներով կարող ենք հաշւել այն հայ եւ թուրք, եւ ուրիշ ազգերի պատկանող վաշխառուները, որոնցից իւրաքանչիւրը տիրում է տասնեակ գիւղերի։

Մի քանի տարի էլ եւ ահա հայ գիւղացին զրկուեց բոլորովին իր հողից։ Հողից զրկուած գիւղացին ծառից պոկ եկած տերեւի նման հողմերից քշւելու, փշրւելու եւ ջնջւելու է դատապարտուած։ Հող չունեցող գիւղացին կեանք չի կարող ունենալ։ Այս ամենին վրայ աւելացնենք բարբարոս կառավարութեան գազանութիւնները եւ քաղաքական հարստահարութիւնները, այն ժամանակ գուցէ մի թոյլ գաղափար կարողանանք կազմել հայ գիւղացու օրհասական վիճակի մասին։

Այո՛. հայ գիւղացին մահուան ճգնաժամումն է, բայց ուրախալին այն է, որ հերոսական ճիգեր է թափում ինքնիրան փրկելու համար այդ սոսկալի կորստից։ Հայ գիւղացին պարզել է յեղափոխական կարմիր դրօշակը, — Սասուն, Մուշ, Ալաշկերտ հայ մշակի արիւնով ներկւած սրբազան վայրեր են այլեւս։ Յեղափոխական հուրը տարածվում է ամեն կողմ եւ օրից օր աւելի բոցավառվում։ Հայ գիւղացու թշուառութիւնն է, որ նիւթ է մատակարարում այդ անընդհատ սաստկանալու վրայ եղող կրակին։ Հայ գիւղացին, որչափ էլ թշուառացած լինի, երբ նա իր անել դրութիւնը զգալով յեղափոխականի ճակատագիրն է գրկել, այլեւս ապահով է նրա ապագան։ Հայ մշակը յեղափոխական է դարձել, այլեւս նրա համար մահ, կամ կորուստ չ՛կայ։

Եւրոպայի հողագործների յեղափոխական կեանքից օրինակ վերցնելով, գիտակցաբար գործող բոլոր յեղափոխականներս պարտաւոր ենք մի որոշ ուղղութիւն եւ գաղափարական լայն ձաւալ մոցնել այդ շարժման մէջ. մենք պարտաւոր ենք նրան տալ մի բարոյական ընդհանուր կապ, համերաշխութիւն ներշնչել այն գործունէութեան մէջ, որի նպատակը պիտի լինի հողի ընդ միշտ համայնականացնելը եւ հարկերի իսպառ ջնջումը։

Հողի համայնականացնելը միայն կարող է բաւականութիւն տալ եւ ապահովացնել յեղափոխական կրակի մէջ ընկած թշուառ հայ գիւղացուն։ — Հայ գիւղացի՛, հայ մշա՛կ, հողի համայնական սեփականութիւնը քեզ համար նոր չէ՛, դու դարերով ապրել ես այդ դրութեամբ; — դու գիտես, որ հողը մշակողին է պատկանում. — դու ես աշխատողը եւ հողը քոնը պիտի լինի։ Ջոհիր ամեն բան ձեռք բերելու եւ ազատութեամբ վայելելու համար քո հողը, որ քո կեանքն է։

ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

Սակաւ չէ պատահում լսել այս կամ այն յեղափոխականի բերնից ցաւակցութիւններ, որ գոյութիւն չ՛ունի մի բաւական ընդարձակ եւ ուժեղ ընդհանուր յեղափոխական կազմակերպութիւն ժողովրդի դատը հաստատ եւ վստահ առաջ տանելու համար, որի շարքում ինքն եւս կարողանար գործել, փոխանակ ձեռնածալ նստելու։

Անշուշտ, շատերի համար դա մի պարզ դիմակ է, որով ծածկում են իրենց անշարժութիւնը եւ մեռելութիւնը. միւսերի համար դա մի արհեստական ինքնախաբութիւն է, որով աշխատում են մեղմացնել այն ներքին անհանգստութիւնը, որ առաջանում է մարդու մէջ համոզմունքների եւ վարմունքի, խօսքի եւ գործի հակասութիւնից։ Բայց շատ շատերն էլ այն կարծիքի են, որ անհրաժեշտ է նախ եւ առաջ ձգտել յեղափոխական ույժերի մի ընդհանուր կազմակերպութիւն ստեղծելու։

Պէտք է համաձայնուել վերջիններիս հետ, որ ամեն մի գործ, որը պահանջում է բազմաթիւ մարդկանց հաւաքական ջանքեր, — առաւել եւս յեղափոխական գործը, որի նպատակն է կործանել դարերից ի վեր գոյութիւն ունեցող հասարակական վնասակար կարգերը, — այն ժամանակ միայն կարող է հաստատ եւ արագ լուծում ստանալ, երբ այդ ջանքերը որոշ կերպով կարգաւորուած են, երբ նրանք համերաշխ ուղղված են ընդհանուր թշնամու դէմ։

Բայց ահա՛ խնդիրը. ինչպէ՞ս կազմակերպել յեղափոխական ույժերը, երբ այնքա՜ն բազմաթիւ տեսական տարաձայնութիւններ գոյութիւն ունեն, որքան այժմ հայ յեղափոխականների մէջ։ Ի՞նչպէս միացնել իրար հակասող սկզբունքները, իրար մերժող ծրագիրները։

Գուցէ ոմանք պատասխանեն, որ պէտք է նախապէս մի տեսական համերաշխութիւն կայացնել յեղափոխականների մէջ, պէտք է ապացուցանել իրար այս կամ այն գաղափարի սխալ լինելը, այս կամ այն ուղղութեան տարաժամանակ լինելը եւ յետոյ, բոլորին հաւաքելով մի դրօշակի տակ, ընդհանուր մի յեղափոխական դաշնակցութիւն կապել։

Այդ ամենը սքանչելի կը լինէր, անշուշտ, եթէ միայն մենք մի որոշ չափ ունենայինք, մի անսխալ չափ, որի համեմատ կարելի լինէր ճշմարիտ յայտարարել մի որ եւ է գաղափար կամ սխալ ճանաչել մի ուրիշ հայեացք։ Բայց դժբախտաբար այդպիսի կրիտէրիումը անհնարին է գտնել եւ չի կարող էլ գոյութիւն ունենալ այժմ, երբ հասարակական գիտութիւնը դեռ բոլորովին անմշակ է, երբ նա դեռ իր զարգացման սաղմային ասպիճանի մէջ է գտնվում։ Հէնց այն հանգամանքը, որ բոլոր գոյութիւն ունեցող հասարակական թէորիաները վիճելի են, ցոյց է տալիս նրանց անկատար լինելը, նրանց գիտական արժէքի համեմատական չափը։ Անհերքելի գիտական ճշմարտութիւնները վիճաբանութեան չեն ենթարկվում, այլ անհրաժեշտ կերպով ընդունվում են։

Միամտութիւն կը լինէր կարծել, որ այս կամ այն գաղափարը քարոզելով, այս կամ այն ուղղութեանը պատկանող բրոշիւրներ ու հրատարակութիւններ անելով կարելի կը լինի գաղափարական միութիւն կայացնել յեղափոխական բանակի մէջ։ Այդպիսի յոյսեր տածել կարող են միայն սահմանափակ պարզամիտները, կոյր ֆանատիքոսները։

Նոյն անյաջողութիւնը կունենայ և մի ուրիշ, արդէն փորձուած միջոց, որ կայանում է հետևեալում։ աշխատել միաւորել զանազան ֆրակցիաները փոխադարձ զիջումներ անելով։ Եւ իրաւ, ինչպէս կարելի է վստահանալ հիմնել մի ուժեղ և տևողական կազմակերպութիւն, ուր մի և նոյն կենտրոնի ղեկավարութեան տակ միանում են այնպիսի անհատներ, որոնք համաձայն են միայն իրենց ծրագրների ամենաընդհանուր և տեսական կետերի մէջ, մինչդեռ իրական գործունէութիւնը, իր բնաւորութեամբ միշտ լինելով մասնաւոր և կենսական, պահանջում է հէնց յատուկ և մասնաւոր տեսակէտների գործադրութիւն։

Էլ չենք խօսում կենտրոնական կազմակերպութեան ուրիշ անյարմարութիւնների մասին։ Այսքանը միայն ասենք, որ հայ յեղափոխականների մի խոշոր մասն իր կաշուի վրայ փորձեց այդ „կենտրոն“-ի կործանիչ ու վնասակար ազդեցութիւնը և ստիպուած եղաւ ձեռք քաշել այդ մտքից։ Եթէ մինչև օրս այդ „կենտրոնները“ վերջնականապէս չեն ոչնչացրել, քայքայման հասցրել գործը, պատճառն այն է, որ գործը ինքը էական, օրգանական պահանջ է ժողովրդի համար և շարունակվում է կենտրոններից դուրս, նրանցից անկախ և շատ ժամանակ նրանց բոլորովին հակառակ։

„Ուրեմն, ձեր կարծիքով, — կը պատասխանեն մեզ — յեղափոխական այժերի ընդհանուր կազմակերպութիւնը անհնարի՞ն է“։

Ամենևին ոչ։ Մեր ասածից միայն այն է հետևում, որ պէտք է ուրիշ միջոցներ և կազմակերպութեան նոր ձևեր որոնել, — որ պէտք է ոչ թէ ի զուր ջանքեր և ի զուր ժամանակ գործ դնենք լոկ յանուն գործունէութեան միութիւն կազմելու համար, այլ պէտք է գործել ամբողջ ուժով յանուն յեղափոխութեան, որից ինքն իրան ծնի միութիւնն և հաստատուն կազմակերպութիւնը։

Թող ամեն մի ֆրակցիա, ինչքան էլ փոքրաթիւ լինի նա, — թող ամեն մի խումբ, որ սերտ կերպով միացած է համոզմունքների նոյնութեամբ և կեանքի տեղական հանգամանքներով, պարզէ կուրի դրօշակը։

Թող ամեն մի անհատ, որի երակներում շատ թէ քիչ եռում է կենդանի արիւն, գործադրի իր բոլոր նախաձեռնութիւնն և եռանդը։

Եւ երբ յեղափոխական բոլոր տարրերը, ինչ գոյնի և ինչ ուղղութեան էլ պատկանեն, կը գտնուեն դէմ ու դէմ թշնամու առջև, երբ նրանք մօտից կը լսեն հայ գեղջուկի ողբը, որի արիւն-քրտինքով սուլթաններն ու ցարերը շլացուցիչ, ճոխ օրգիաներ են սարքում, երբ նրանց աչքի առջև զինուորների սուները կը փայլեն, խրուելով ապստամբ ժողովրդի մարմնի մէջ, երբ նրանց ականջին կը հասնի ամենայետին վայրենութեամբ անպատված անմեղ կոյսերի և պատուաւոր կանանց աղաղակը, երբ, վերջապէս, նրանց ընկերների յետևից կը փակուին, գուցէ ընդ միշտ, բանտերի դռները, ուր մարդ կենդանի թաղված է մնում, — այն ժամանակ գործունէութիւնը, կեանքը կը մշակէ հայ յեղափոխականների համար գործելու մի ընդհանուր ծրագիր, այն ժամանակ այժմեան տեսական վէճերի տեղը կը բռնի մի գործ-

նական համերաշխութիւն զանազան կատարելապէս ինքնուրոյն խմբերի մէջ, որոնցից ոչ մէկը չի աշխատիլ միւսների գլխին կապել ո՛չ իր սկզբունքները, ո՛չ իր տաքտիկան, և այն ժամանակը միայն մենք կ'ունենանք մի ճշմարիտ կազմակերպութիւն, — մի կազմակերպութիւն, որ առաջացած կը լինի կենսական պայմաններից, գործ դրած ջանքերից, — մի կազմակերպութիւն, որ հիմնուած կը լինի գործող խմբերի անմիջական և սերտ յարաբերութիւնների վրայ։

Կազմակերպուելու համար պէտք է գործել։

Գործել, անընդհատ գործել — ահա՛ դէպի կազմակերպութիւն տանող միակ ճանապարհը։

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ

ԹԻՒՐՔԻԱ — Սրբազան Աշըղեան պատրիարքի երկար ջերմ գործունէութիւնը անվարձադիր էր մնում հայ հասարակութեան կողմից. սրբազանը կրկնապատկելով իւր եռանդը սկսեց գործել. կոնդակներ ուղարկեց ամեն կողմ յորդորելով աջակցել իրեն Թիւրքիան ազատելու խռովայոյզ թափառաշրջիկներից, որոնք այլապէս յեղափոխական անունն են կրում. սահմանեց կրօնական տուրք և այդ դէպքում էլ օգնութեան կանչեց կառավարութեան զափտիաներին, նրանց իրաւունք տալով մտնել հայի տունը և յանուն հոգևորականութեան տարած խնամքի և յանուն հայրախնամ պատրիարքի տուրք ժողովել։

Վերջապէս հասկացաւ հայ հասարակութիւնը, որ պէտք է վարձատրել այդպիսի մի գործիչին։ Ի դիմաց հայ հասարակութեան Յակոբ անունով մի երիտասարդ ապրիլի 13 ուզեց վարձատրել ս. պատրիարքին ատրճանակի երեք հարուածով։ Դժբախտաբար փորձը անաջող էր, բայց թող չյուսահատուի ս. պատրիարքը. հասարակութիւնը երախտապարտ է դէպի իւր գործիչին։

Տրապիզոնից, ի միջի այլոց, մեզ գրում են.

„Քաղաքիս մէջ վայրենի, անտաշ խստութիւններ կը բանացուին և զարմանք, որ ոստիկաններն և ոստիկանապետն ամենաստոր տգէտ մարդիկներ են, նոր եկող հայու մը ետևէն որոշ շան պէս կ'երթան։

Վերջերս կուսակալն գաղիական հիւպատոսարանէ խնդրած է Գաղղիայէն եկած առհասարակ բոլոր լրագիրներն ետ ղրկել։ Հիւպատոսը գաղղիացիի մը յատկանիշներն չ'ունեցող պուլկար մը ըլլալով վերջապէս ընդունեց...“

Եւրոպական թերթերին հաղորդում են Պոլսից. — 29 ապրիլի. Անցեալ շաբաթ մի խումբ կօնտրաբանդիստներ փորձեցին Զմիւռնիա հանել արգելուած զէնքեր։ Երբ նրանց հետամուտ եղան, ստիպուած ծովը ձգեցին բոլոր զէնքերը։ Ջրասոյզները կարողացան հանել 9000 փամփուշտ և 30 ատրճանակ։

— Հայ աւազակները յարձակուել են թրքական մի պահնակի վրայ, որ գտնւում է Սիվազի և Անգօրայի մէջ տեղը։

ՌՈՒՍԱՍՏԱՆ — Մօտերքս Պերմսկի նահանգում Տագիլի գիւղացիներն անկարող լինելով վճարել իրանց վրայ բարդուած մի քանի տարուայ հարկերը, որ նոյն իսկ ռուսաց օրէնքների դէմ անիրաւ պահանջում էին նրանցից, 8 հոգի են ընտրում և ուղարկում գաւառապետի մօտ, նկարագրելու իրենց դրութիւնը և խնդրելու, որ ազատեն իրենց այդ հարկերից։ Գաւառապետը բանտարկել է տալիս այդ 8 պատգամաւորներին և ինքը անձամբ գնում է գիւղացոց ժողովին և հայհոյանքներ տալով հրամայում է ցրուեն։ Գիւղացիք պահանջում են ազատել իրենց ընկերներին բանտից։ Գաւառապետը կատաղած թուրը հանում է և կրկին հրամայում ցրուել։ Գրգռուած ամբոխը յարձակւում է գաւառապետի վրայ, փշրում նրա սուրը և մի լաւ էլ ծեծում։ Նահանգապետը հեռագիր ստանալուն պէս հրամայում է երեք գունտ ուղարկել գիւղացիներին պատժելու համար։ Եւ յիրաւի, վայրենի կատաղութեամբ հաւաքում են բոլոր գիւղացիներին և անխնահ ու անխտիր ծեծում մեծից մինչև պստիկը, ծերերին, երեխաներին։ Երկու հոգի մեռնում են հար-

ւածների տակ, իսկ 70 հոգի ընկնում են հիւանդ և անկարող շարժուելու։

Մայիսի 2-ին գիշերը բազմաթիւ ձերբակալութիւններ տեղի ունեցան Մոսկվայում, Պետերբուրգում, Սմոլենսկում, Օրեոլում։ Պետերբուրգում գաղտնի տպարան է գտնուել. բանտարկեալների թուում են Չերմակ՝ վիճակագրական բիւրոյի գլխաւորը, Ստրուվէ՝ երիտասարդ գիտնական, Ալէքսանդրովն իր կնոջ հետ։ Սմոլենսկում նմանապէս մի գաղտնի տպարան են գտել։ Օրեոլում ձերբակալուած են ինժիներ Կորոլեվը, Մարկ Նատանսոն իր կնոջ հետ՝ նոր Սիբիրից վերադարձած, և Լվովը։

Պետերբուրգի տպարանը պատկանում էր Նարոդնայա Վոլեա-ի կուսակցութեանը։ Հրատարակում էին „Բանուորական թերթ“ անունով մի լրագիր։

Վարշաւայում, Կոստիշկոյի յեղափոխութեան (1794 թ.) հարիւրամեակի ցոյցերի առթիւ ձերբակալուեցան ապրիլի 17-ին 200-ից աւելի մարդիկ։

Զավէրցիայի (Լէհաստան) բամբակեղծարաններում աշխատում են 5000 բանուորներ, օրեկան 45-55 կոպէկ վարձով, մինչդեռ ֆաբրիկաներն ահագին շահեր են բերում տէրերին։ Մարտի 8-ին բանուորները գործադուլ արին, երբ տէրերը ուզեցին վարձ վճարելու մի նոր ձև մտցնել, այն է՝ ոչ թէ արշինի համեմատ, այլ կտորի։ Այդ նոր ձևը իջեցնում էր բանուորների շաբաթական վաստակը 45-50 կոպէկի չափ։ Գործադուլ անող բանուորները պահանջում էին, որ հին ձևը պահպանուի։ Այսպէս գործադուլը խաղաղ շարունակուեց մի շաբաթ, որից յետոյ տէրերը խոստացան բանուորներին 30000 ռուբլի օգնութիւն տալ (1 շաբթուայ վարձը) և 10 հազար ռուբլի էլ եկեղեցի շինելու համար նուիրել։ Բանուորները համաձայնուեցին և վերադարձան գործարանները աշխատելու նախկին պայմաններով։ Բայց լուր տարածուեց, որ բոլոր խոստումները խաբեբայութիւն են և գործադուլը նորից սկսուեց։ Այս անգամ բանուորները սպառնում էին գործադուլը չդադարեցնել, մինչև որ խոստումները չկատարեն։

Այդ միջոցին կառավարութիւնը բազմաթիւ կօզակներ է ուղարկում Զավէրցի, որոնք 3 շաբաթ շարունակ ամենավրդովեցուցիչ կերպով հարստահարում են բնակիչներին, այնպէս որ սրանք կօզակների ձեռքից ազատուելու համար, փախչում և մի քանի ժամանակ թաղչում են մօտակայ անտառներում և գիւղերում։ Վերջապէս կօզակները յետ կանչուեցան, թողնելով միայն „ապահովութեան խմբակը“ և յոգնած, աղքատացած բանուորները նորից սկսեցին իրենց աշխատանքը։

Խոստացուած 30000 ռուբլին վճարուեցան առաջի գործադուլից յետոյ։

ԳԵՐՄԱՆԻԱ — „Սոցիալիստ“ թերթի խմբագիրը և երկու աշխատակիցները ձերբակալուած են....

Գերմանիայում մամուլը ազատ է։

ՀՈՒՆԳԱՐԻԱ — Հօդմէզյում գիւղացիները մի գաղտնի սոցիալիստական ընկերութիւն էին կազմել։ Ընկերութեան մասնակցում էին մի քանի հազար գիւղացիներ։ Կառավարութիւնը իմանալով այդ ընկերութեան մասին, կարգադրում է ցրել։ Այդ դիտաւորութիւնը սաստիկ դրգռում է գիւղացիներին։ Վասարբէլիում մի շարժում է տեղի ունենում, որի ժամանակ ոստիկանները 4 հոգի են սպանում և 60-ին վիրաւորում։

Սոցիալիստական գաղափարները միմիայն բանուորներին չեն մատչելի, այլ նոյնպէս և գիւղացիներին.

ԻՏԱԼԻԱ — Սիցիլիայի և Մասսա-Կարրարի շարժումների վերջաբանը. — զինուորական դատարանները 41 օրուայ ընթացքում դատապարտել են 497 հոգի, որոնց պատիժների գումարն է՝ 1657 տարի բանտարկութիւն, 20 տարի „գաղտնի“ բանտարկութիւն և 54 տարի բերդարգելութիւն։ Դատապարտուածների թուում կայ 6 երեխայ, որոնցից մէկը 11 տարեկան է։

ԻՍՊԱՆԻԱ — Բարցէլոնում 6 յեղափոխականի մահի են դատապարտել և երկուսին ցմահ բանտարկութեան, որոնց յանցաւոր են ճանաչում իբրև Պալլասի ընկերներ։

Մարտի 23-ին նոյն քաղաքի բանտում, չը դիմանալով իր կրած տանջանքներին, մեռաւ Միշէլ Նաքէր յեղափոխականը։ Մայիսի 10-ին նոյն բանտում մեռաւ Բօրրաս անունով յեղափոխականը։

Ասում են Իսպանիայում ինկվիզիցիան վերացրած է....

—o—

Ի՞ՆՉ Է ԱԶԱՏՈՒԹԻՒՆԸ

Շատ հատորներ են գրուել այս կարևոր հարցի մասին, շատ վճիռներ են կտրուել, բայց մեզ ծանօթ յեղափոխական գրողներից և ոչ մէկին մինչև այսօր չի յաջողուել տալ նրան մի բոլորովին ճիշտ որոշում։ Ոմանց համար ազատութիւն՝ ասել է, ունենալ իրաւունք անել այն ամենը, ինչ օրէնքը չի արգելում։ Ուրիշ մի քանիսը, — որ իրանց համարում են խիստ ուժեղ և խելացի, սկզբունք ընդունելով, որ ամեն մի իրաւունք անհրաժեշտաբար կապուած է մի պարտականութեան հետ, պնդում են, որ ազատութիւնը չի կարող գոյութիւն ունենալ, եթէ „մի խելացի կարգադրութիւն չկառավարէ բոլոր շարժումները, հաւասարակշռելով իւրաքանչիւրի իրաւունքները և պարտականութիւնները“։ Եւ վերջապէս 1848 թուականի ֆրանսիական մեծ ներքինիներն իրենց խեղկատակ սահմանադրութեան մէջ որոշում են այսպէս. „ազատութիւնը—երթալու և գալու իրաւունքն է (.՝)“։

Մեր կարծիքով, ազատութիւնը կեանքի վայելումն է։ Եւ այս պարզ որոշումը մենք համարում ենք միակ ճիշտը, միակ անվիճելին. ապրել՝ նշանակում է ունենալ լրիւ և ամբողջ ճանաչողութիւն իր էութեան, ազատ տիրապետութիւն իր ես-ի. վերջապէս — ասել է վայելել այն բոլոր իրաւունքներն ու առաւելութիւնները, որ անխզելի, անբաժան են մարդկային բնաւորութեանը։ „Կատարեալ մարդ լինելու համար, պէտք է ազատ լինել“ — ասել է մի փիլիսոփայ։ Բայց ոչ ոք չի կարող ազատ, այսինքն կատարեալ լինել մի բռնակալի իրաւունքի ու հսկողութեան տակ, մի և նոյն է թէ արդեօք այդ բռնակալը մի մարդ է, թէ օրէնք։

Ազատութիւնը, ինչպէս կեանքը, մի է և չի կարող անպատիժ կերպով կտոր կտոր արուել. նա կամ կայ ամբողջ կամ չկայ բոլորովին։

Մտքերը մթնեցնելու, հասկացողութիւնները մոլորեցնելու նպատակով և կեղծօրէն պատճառաբանելով, որ մարդ երևում է բազմաթիւ և տարբեր կերպարանքներով՝ քօղարկել են ազատութիւնը բազմաթիւ կոչումներով. ազատութիւն մամուլի, ազատութիւն ժողովների, քննութիւնների, խղճի, խօսքի, և այլն, և այլն. կարծես մարդկային կեանքի այս զանազան ձևերը մի ընդհանուր միութեան զանազան ձևերը չը լինեն։ Կեանքը արտայայտվում է նոյնպէս տարբեր կերպարանքներով, մնացած բոլոր կենդանի արարածների մէջ, բայց և այնպէս մի՞թէ կեանքը մի՛ է իր էութեամբ և զարգացմամբ։ Նոյն իսկ դուալիստներն ստիպուած են ընդունել այդ։

Մենք կրկնում ենք. ազատութիւն ասել է վայելումն կեանքի, իր բոլոր լիութեամբ, իր ամբողջ ու լրիւ զարգացմամբ։

Ազատութիւնը կամ անհատական ինքնավարութիւնը կարո՞ղ է արդեօք միատեղ գոյութիւն ունենալ կենտրոնացման կամ ազգային ինքնավարութեան հետ։ Ամբողջ հարցը դրա մէջն է։ Դնել այդպիսի մի հարց ասել է արդէն վճռած լինել։ Ազգը պարունակում է իր մէջ կառավարութիւն, իշխանութիւն, այսինքն առանձնաշնորհում, նախապատութիւն, բռնակալութիւն, կամ ուրիշ խօսքերով՝ կանոններ, սահմաններ, որ դրուած են ամեն մի անհատի ազատ և կամաւոր ձգտումների հակառակ։ Ազգի մէջ անհատական ազատութիւնը, այս բարձր բարոյական երաշխաւորութիւնը, առանց որի քաղաքացիների համար չկայ ճշմարիտ ազատութիւն, ճակատագրական կերպով և իրապէս միշտ զրկւում, հարստահարւում է յօգուտ հաւաքական ամբողջութեան, այսինքն մի հիերոգլիֆական ֆիկցիայի (կեղծիքի) համար, որ հնարել են արտօնեալները և կեղեքիչները, որ աւելի ևս հաստատեն իրենց իշխանութիւնը ամբոխի վրայ։ Ազգային հաւաքական ամբողջ-

ջութեան անունը տալիս են մի պնպիսի անմենաանմիտ, ամենահրէշաւոր բանի, որ դժուար է երևակայել՝ — բոլոր քաղաքացիների ամբողջութեանը. և որոշում են պսպէս. „բոլոր քաղաքացիները հաւասար են օրէնքի առաջ“:

Բայց ի՞նչ է օրէնքը:

„Մի արդար յարաբերութիւն“ — ասում է Սէն-Ժիւստը: Ի՞նչ արդար յարաբերութիւն կարող է լինել կառավարութեան և հպատակների, տիրոջ և ծառայի, կեղեքողի և կեղեքուողի, վերջապէս աղքատի և հարուստի մէջ: Օրէնքը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի ճնշման, ստրկացման գործիք. այլ կերպ չէր էլ կարող լինել, և այդ գործիքներից ամենազզուելին, որովհետև նա առաջարկւում է միշտ յանուն արդարութեան և իրաւունքի: Կարծես թէ իրաւունքը և արդարութիւնը, որ ծնունդ են մարդկային խղճի ու գիտակցութեան, կարող են ունենալ որևէ ընդհանուր կապ այդ անարդար բանի հետ, որ անդիւնք է թալանի, կեղծիքի և խորամանկութեան:

. . . . . .

Ազատութիւնը, ասացինք մենք, անհնար է պնտեղ, ուր անհրաժեշտ է լինում իշխանութեան գոյութիւնը:

Իշխանութիւնն ազգութիւնների, քաղաքական և վարչական կենտրոնացման լոգիկական ու բնական հետևանքն է: Ուրեմն եթէ յեղափոխութեան նպատակը լինելու է ազատութիւնը — այս մասին ոչ մի կասկած չի կարող լինել — ամենաանհրաժեշտ կերպով պէտք է շատ բարձր յայտարարել ապակենտրոնացումը, և հետևաբար հաստատել հասարակական խմբերի կազմակերպութիւնը, ամենից առաջ հիմք ընդունելով համայնքների ինքնիշխանութիւնը, դաշնակցական սկզբունքով:

Որ տիրապետողները և իրենց արբանեակները, ինչ որ էլ լինի, ուզում են պահպանել ազգային մեծ ագգլոմերատների (խմբերի) հակահաւասարական սկզբունքը, այդ մենք հասկանում ենք առանց դժուարութեան, որովհետև սա նրանց համար գոյութեան հարց է: Բայց երբ յեղափոխականներն են համաձայնում հետևել նոյն մոլորութիւններին՝ ահա այդ արդէն անհասկանալի է լինում:

Աշխատաւորնե՛ր, ուզո՞ւմ էք ազատուած լինել դրամատիրական զարհուրելի և անողորմ կեղեքումից: Ուզո՞ւմ էք, որ ձեր ընտանիքից բոլորովին կորչեն քաղցը, թշուառութիւնը և նրանց բոլոր հետևանքները: Վերջապէս ուզո՞ւմ էք դուք լինել ազատ — (որովհետև լաւ իմացէք, միայն ազատութեամբ աշխատաւորը կարող է յոյս ունենալ վայելելու կեանքի բարիքները): Քննեցէք, ուսումնասիրեցէք ինչ որ խօսւում և կատարւում է ձեր շուրջը. տեսէք, թէ ի՞նչ էք դուք, ի՞նչ տեղ ունէք այն ազգերի գրկում, որոնց բարերար խնամակալն են հռչակում ձեզ անդադար: Մենք ձեզանից չենք պահանջում, որ հաւատաք մեզ միայն խօսքով: Ո՛չ: Ոչ մի բանի մի՛ք համաձայնուիլ, հաւատ ընծայեցէք միայն այն բաներին, որ ձեզ համար բոլորովին պարզ են և համաձայն ճշմարտութեան ու ձեր շահերին: Թող կորչեն նրանք, որ ձեզ քարոզում են կոյր հաւատ. ազատութեան թէ բռնակալութեան անունից խօսեն նրանք, մի և նոյն է՝ — նրանք անշուշտ ստախօս երեսպաշտներ են:

Թո՛ղ բարի զգացմունքը, բանականութիւնը, խելքը լինեն ձեր միակ առաջնորդը: Եւ այդպիսի խորհրդատուներից ներշնչուած՝ ձեր հասարակական դաստիարակութիւնը շատ շուտ կը վերջանայ:

Ժողովրդական մեծ յաղթանակի օրը փշրեցէք այն զարհուրելի կապոցը, որ անուանւում է ազգային և կենտրոնացնող միութիւնը. թօթափեցէք ձեզանից վարչական խնամակալութիւնը. ոչնչացրէք օրէնքները, այդ ծանր շղթաները, և յայտարարեցէք, որ Արդարութիւնը, Աշխատանքը և Ազատութիւնը, խաղաղութեան և սիրոյ այս քաղցր երրորդութիւնը միայն կոչուած կը լինի այսուհետև աշխարհը կառավարելու:

Հեկտոր Մորել.

Թերթիս դիմել հետևեալ հասցէով.
W. Voynich. (Hamaïnk). 3, Iffley Road, 3. Hammersmith, W., London.

Փարիզ. Միջազգային տպարան.